

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՉԵՂՈՔՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ ԾԱՎԱԼՎԱԾ ՊԱՅՔԱՐԸ «ՍԱՌԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ» ՏԱՐԻՆԵՐԻՆ

ՄԻՔԱՅԵԼ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Չեղոքության քաղաքականությունը և նրա նշանակությունը միջազգային հարաբերություններում միշտ էլ գերտերությունների ուշադրության կենտրոնում են եղել: Հետաքրքրությունն ավելի է մեծանում հատկապես «սառը պատերազմի» տարիներին, երբ երկու հակադիր ճամբարներում չեղոքության քաղաքականության վերաբերյալ սկսում են միմյանց հակասող փաստարկներ հնչել: Յուրաքանչյուր կողմ, սեփական շահերից ելնելով, փորձում էր գնահատական տալ չեղոք երկրների տեղի և դերի վերաբերյալ՝ նկատի առնելով ստեղծված աշխարհաքաղաքական իրավիճակը: Հետաքրքիր է այն հանգամանքը, որ անգամ «սառը պատերազմի» ավարտից հետո չեղոքության քաղաքականության վերաբերյալ ծավալված քննարկումները չդադարեցին և ցայսօր հետաքրքրություն են ներկայացնում քաղաքագետների համար, մասնավորապես Եվրոպական միության և ՆԱՏՕ-ի ընդլայնման համատեքստում:

Հարկ է նշել, որ «չեղոքություն» հասկացությունն իր պատմական զարգացման ընթացքում մի քանի փուլեր է անցել: Իր ծագումից մինչև միջնադարն ընկած ժամանակաշրջանում այն նշանակում էր պատերազմողներին հավասար հնարավորությունների ընձեռում պատերազմին անմիջականորեն չմասնակցող որևէ պետության կողմից: Այնուհետև այն ստանում է չեղոք պետության կողմից պատերազմ վարողներին որևէ օժանդակություն չցուցաբերելու իմաստը, իսկ Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո չեղոքությունը դառնում է մի շարք երկրների համար ռազմական դաշինքներին չմիանալու ձգտման արտահայտություն:

Ուստի պետք է տարբերել «չեղոքություն» հասկացությունն իր իրավաբանական իմաստով, այսինքն՝ պատերազմի ժամանակ կողմերից ոչ մեկին չհարելու պետության իրավական կարգավիճակը չեղոքության քաղաքականությունից, որն իրականացվում է ոչ միայն պատերազմի ընթացքում, այլև խաղաղ ժամանակ՝ նպատակ ունենալով երկիրը զերծ պահել ռազմական միությունների և դաշինքների մեջ ներքաշվելուց: Վերջինս քաղաքագիտության մեջ հաճախ հանդիպում է «neutrality»¹ եզրույթով, որի հայերեն համարժեքը կարելի է համարել «չեղոքականությունը»: Խոսելով չեղոքության մասին՝ սույն հոդվածում նկատի ենք ունենալու դաշինքներին և ռազմաքաղաքական խմբավորումներին չմասնակցելու պետության վարած քաղաքականությունը:

¹ Տե՛ս **Коровин Е.** Проблема нейтралитета на современном этапе // "Международная жизнь", 1958, № 3, էջ 48:

Չետպատերազմյան տարիներին Եվրոպայի, Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի մի շարք պետությունների շրջանում նկատվող չեզոք արտաքին քաղաքականություն վարելու և ռազմական բնույթի դաշինքներին չմիանալու ձգտումները բացատրվում էին աշխարհաքաղաքական մի քանի գործոններով: Առաջինն ու ամենակարևորը, թերևս, ատոմային պատերազմի սպառնալիքն էր՝ դրանից բխող բոլոր հետևանքներով, ինչը շատ երկրների ստիպում էր զերծ մնալ տարաբնույթ ռազմական հակամարտություններից:

Չաջորդ գործոնը, որը ևս մեծ ազդեցություն ունեցավ չեզոքության կողմնակիցների բանակի համալրման գործում, երկու բևեռների միջև սպառազինությունների մրցավազքն էր և տարբեր երկրներին հակադիր ռազմական դաշինքների մեջ ներքաշելու ձգտումը: Իրոք, սպառազինությունների մրցավազքն աշխարհի բոլոր ազգերի գլխին կախված «դամոկլյան սուր» էր. վախն ավելանում էր հատկապես հսկայական ավերածություններ պատճառելու հնարավորություն ունեցող նոր տեսակի զենքերի ստեղծմանն ու կուտակմանը զուգընթաց: Ցանկանալով զերծ մնալ հարձակողական դաշինքներից և պահպանել իրենց անվտանգությունը՝ շատ երկրներ ընտրում էին չեզոքության ուղին, որն ինչ-որ առումով ընդունելի էր դառնում երկու բևեռների համար էլ, քանի որ դիտվում էր որպես փխրուն «status quo»-ի պահպանում:

Բացի այդ, շատ կարճ ժամանակահատվածում երկու աշխարհամարտեր տեսած ժողովուրդների մեջ զգալի էր նոր պատերազմի սանձազերծման սարսափը, ուստի աշխարհի տարբեր մասերում ձևավորվել էր չեզոքություն պահպանելու դիրքորոշում, որը դրսևորվում էր խաղաղության կողմնակիցների զանգվածային շարժումներով:

Սակայն Եվրոպայում հետպատերազմյան շրջանում չեզոք պետությունների առկայությունը չէր կարող ձեռնտու լինել ԱՄՆ-ին, քանի որ ստեղծված քաղաքական «վակուումը» օրերից մի օր կարող էր լցվել կոմունիստական իշխանությամբ: Սա լուրջ խնդիր էր Նահանգների համար նաև այն պատճառով, որ ԽՍՀՄ-ը աշխարհագրորեն ավելի մոտ էր գտնվում այդ երկրներին և ավելի հեշտությամբ կարող էր տարածել իր ազդեցությունը, ինչը հակակշռող լուրջ ուժ կարող էր դառնալ ՆԱՏՕ-ի համար:

Այս նկատի ունենալով՝ ամերիկյան կողմնորոշմամբ եվրոպական երկրները սկսում են հանդես գալ չեզոքության քաղաքականության դեմ՝ հիմնականում նշելով, որ ստեղծված աշխարհաքաղաքական իրադրության պայմաններում այն կորցրել է իր արդիականությունը: Այսպիսի կոչերն առավել լսելի են դառնում 1949 թ. գարնանից հետո, երբ ստորագրվում է Չյունսիսատլանտյան պայմանագիրը: ԱՄՆ-ում նույնպես քաղաքական գործիչներից շատերը նշում էին, որ չեզոքությունն այլևս հնացած հայեցակարգ է և կորցրել է իր ներուժը՝ որպես միջազգային հարաբերությունների կարգավորման գործոն:

Իրականում չեզոք երկրների վարած քաղաքականությունն ԱՄՆ-ի կողմից դիտվում էր որպես միջազգային կոմունիստական շարժմանը նպաստող գործոններից մեկը: Այսպես, ամերիկյան սենատոր Նոուլենդը 1956 թ. կոչ էր անում վերանայել չեզոք երկրներին հատկացվող օգնության ամե-

րիկյան ծրագիրը՝ նշելով, որ պետք է պահանջել, որ չեզոք պետությունները որպես հատուցում միանան «կոմունիզմի դեմ հավաքական անվտանգության համաձայնագրերին»²: Նա, քննադատելով չեզոք երկրներին, նաև նշել էր, որ վերջիններս, ստանալով ամերիկյան օգնությունը, փորձում են այլ երկրների գերծ պահել հավաքական անվտանգության համակարգերից՝ նրանց դրդելով չեզոքության:

Մի կողմից գտնելով, որ չեզոքության քաղաքականությունն իրեն սպառել է, իսկ մյուս կողմից՝ զգուշանալով նրա «կոմունիստական» կողմնորոշումից՝ ԱՄՆ-ն հայտնվում էր տրամաբանական փակուղում: Նահանգներն անհանգստանում էր այն փաստից, որ չեզոք պետություններն ի վերջո կարող են հայտնվել սոցիալիստական ճամբարում, քանի որ չեզոքության գաղափարին խորհրդային Միության ցուցաբերած դիվանագիտական աջակցությունը համարում էին վերջինիս քաղաքական նպատակների իրագործման միջոց: Տվյալ փաստը, այնուամենայնիվ, ոչ մի կերպ չի անդրադառնում չեզոքության կենսունակության վրա, քանզի հենց տվյալ հակամարտությունը և ուժերի հավասարակշռությունը երկու բևեռների միջև ավելի էին ամրապնդում չեզոք երկրների դիրքերը միջազգային ասպարեզում: Ավելին, Եվրոպայի չեզոք պետություններից բոլորն էլ բռնել էին «կապիտալիստական» զարգացման ուղին և դժվար թե հրաժարվեին դարերի ընթացքում ձևավորված համաեվրոպական արժեքներից:

Իր հերթին, խորհրդային քարոզչամեքենան հանդես էր գալիս չեզոքության դեմ պայքարող արևմտյան քաղաքականության քննադատությամբ, քանզի մեծ էր վախը, որ «ատլանտյան եվրոպան» կկանգնեցնի սոցիալիստական շարժման «հաղթական երթը»: Խորհրդային քաղաքագետները առիթը բաց չէին թողնում նշելու, որ չեզոք քաղաքականության ներուժը հետպատերազմյան շրջանում ավելի է ընդլայնվել և ամրապնդել իր կենսունակությունը, քանի որ այն կարող է ապավինել «խաղաղասերների» հզոր ճամբարին, այսինքն՝ սոցիալիստական երկրներին, որոնք իրենց ջանքերը նպատակաուղղում են միջազգային ասպարեզում խաղաղության հաստատմանը: Փաստորեն, խորհրդային Միության դիվանագիտությունն ամեն կերպ սատարում էր չեզոք երկրներին՝ դրանով իսկ փորձելով նրանց գերծ պահել արևմտյան կողմնորոշում ձեռք բերելու հեռանկարից:

Սակայն դժվար է չհամաձայնել միջազգային իրավունքի խորհրդային հայտնի մասնագետ Խլեստովի այն կարծիքին, որ «չեզոքությունն այն տեսքով, որով գոյություն ուներ (ընդհուպ մինչև երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտը - Մ. Ա.), դրական նշանակություն ունեցավ, քանզի չմասնակցելով պատերազմին՝ չեզոք պետությունները դրանով իսկ սահմանափակում էին ռազմական գործողությունների ընթացքը և նպաստում ռազմական հակամարտության մեկուսացմանը, իսկ նրանց կողմից պատերազմող պետություններին ռազմական օգնություն չցուցաբերելը ինչ-որ աստիճանով նվազեցնում էր ռազմական գործողությունների ինտենսիվությունը և ժողովուրդներին պատերազմների պատճառով հասցված ավերածություններն ու տառապանքները: Իսկ իմպերիալիստա-

² Моджорян Л. Идея нейтралитета в наши дни // "Новое время", 1956, № 8, с. 12.

կան պետությունները շատ հաճախ չարաշահում էին չեզոքությունը և այն օգտագործում էին այն նպատակով, որ օգնություն չցուցաբերեն ֆաշիստական պետությունների կողմից ագրեսիվ հարձակման գոհ դարձած պետություններին»³:

Չեզոքության հակառակորդների գործունեությունը հիմնականում ծավալվում էր արևմտյան երկրների «միավորման» համար մղվող պայքարի դրոշի ներքո: Խորհրդային Միությունում կարծում էին, որ հենց այս գաղափարախոսության միջոցով հնարավոր եղավ ՆԱՏՕ-ի անդամ դարձնել Դանիային և Նորվեգիային: Այդ ուղիով էին զարգանում հարաբերությունները նաև Շվեդիայի հետ, իսկ ամենաուժեղ հարվածը ԽՍՀՄ-ի շահերին կարող էր հասցնել Արևմտյան Գերմանիայի վերազինումը:

Արևմուտքում չեզոքության հարցի շուրջ ծավալված հիստերիայի հիմնական պատճառ խորհրդային պատմաբան Մելնիկովը համարում է այն, որ այդ քաղաքականությունը ամենևին չէր համապատասխանում աշխարհի տարբեր մասերում ռազմական դաշինքներ ստեղծելու, միջազգային ասպարեզում կասկածի, անվստահության և լարվածության մթնոլորտը պահելու նրանց ծրագրերին⁴:

Բայց պատմությունը վկայում է, որ Արևմուտքը միակը չէր ռազմական դաշինքներ ստեղծելու իր քաղաքականությամբ. ստեղծված աշխարհաքաղաքական պայմաններում, երբ ԽՍՀՄ-ին սպառնում էր Արևմտյան Գերմանիայի վերազինումն ու վերջինիս մուտքը ՆԱՏՕ, 1955 թ. մայիսին խորհրդային պետության նախաձեռնությամբ ստեղծվում է եվրոպական սոցիալիստական երկրների ռազմաքաղաքական պաշտպանողական միությունը՝ Վարշավյան պայմանագրի կազմակերպությունը:

Բնականաբար, ոչ բոլոր երկրներին հնարավոր կլիներ ներքաշել այս կազմակերպության մեջ, քանզի դա կարող էր նոր պատերազմի պատճառ դառնալ: Ուստի Խորհրդային Միության դիվանագիտության համար լավագույն այլընտրանքը նոր չեզոք գոտիներ ստեղծելն էր: Այսպիսի սցենարով տեղի ունեցավ նաև կապիտալիստական զարգացման ուղին բռնած Ֆինլանդիայի և Ավստրիայի չեզոքացումը:

1948 թ. ապրիլին Մոսկվայում ստորագրված Բարեկամության, համագործակցության և փոխօգնության մասին խորհրդա-ֆիննական պայմանագրով Խորհրդային Միությունը հավանության է արժանացնում Ֆինլանդիայի չեզոք քաղաքականությունը վարելու պատրաստակամությունը, իսկ 1955 թ. մայիսին Վիեննայում Խորհրդային Միության, ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի և Ավստրիայի արտգործնախարարների կողմից ստորագրվում է ավստրիական պետական պայմանագիրը, որով վերականգնվում է երկրի ինքնիշխանությունն ու անկախությունը, և վերջ է դրվում վերոնշյալ չորս տերությունների զորքերի կողմից երկրի օկուպացիային: Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց և զորքերի դուրսբերումից հետո ավստրիական պառլամենտը

³ Хлестов О. Женевские соглашения по Лаосу – важный шаг в формировании современного понятия нейтралитета // "Советское государство и право", 1963, № 5, с. 92-93.

⁴ Стен Мельников Д. Проблема нейтралитета и современное международное положение // "Международная жизнь", 1956, № 2, էջ 72-80:

դաշնային սահմանադրական օրենք է ընդունում մշտական չեզոքության մասին, որը ստանում է միջազգային ճանաչում⁵:

Ավստրիական հանրապետության չեզոք կարգավիճակը ճանաչելուց որոշ ժամանակ անց նրա որդեգրած քաղաքականության հասցեին Արևմուտքում մեղադրանքներ են սկսում հնչել: Ամենատարածված և սին մեղադրանքը թերևս այն էր, որ չեզոք կարգավիճակը պարտադրված բնույթ էր կրում և Խորհրդային Միության միակողմանի քաղաքական կամքի դրսևորում էր: Ամերիկյան մամուլի մի մասն էլ, զարգացնելով նույն միտքը, հայտարարում էր, որ Ավստրիան պետք է ընթանա ոչ թե չեզոքության ուղիով, այլ «բուֆերի» դեր կատարի ՆԱՏՕ-ի ուժերի համար: Ոմանք էլ նշում էին, որ նա չի ցանկանում կողմնորոշվել միայն դեպի Արևմուտք և ձգտում է օգուտ քաղել երկու ճամբարներից էլ՝ չպատկանելով նրանցից ոչ մեկին⁶:

Շվեդիայի «ավանդական» չեզոքությունը նույնպես անհանգստացնում էր Արևմուտքին, քանզի այս երկրի կառավարության հաջողությունները մատնացույց անելով՝ Խորհրդային Միությունը եվրոպական մյուս երկրներին, որոնք դեռ չէին հասցրել ՆԱՏՕ-ի անդամ դառնալ, կոչ էր անում որդեգրել նույնպիսի քաղաքականություն: Նա կարծում էր, որ հատկապես սկանդինավյան երկրները՝ Նորվեգիան, Դանիան, ինչպես նաև Իսլանդիան, պետք է բռնեն չեզոք դառնալու ուղին, ինչը նրանց հնարավորություն կտար զերծ մնալու ազդեցիկ դաշինքներին միանալուց: Խորհրդային դիվանագիտությունն ամեն կերպ փորձում էր համոզել, որ չեզոքությունը հենց այն քաղաքականությունն է, որի միջոցով ստեղծված միջազգային իրադրության պայմաններում հատկապես *փոքր* երկրներին հնարավորություն կտա պահպանելու ոչ միայն սեփական ազգային շահերը, այլև միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը: «Եթե բոլոր փոքր պետությունները բռնեին դրական չեզոքության և ռազմական դաշինքներին չմասնակցելու քաղաքականության ուղին, ապա դա առավելագույնս կդժվարացներ իմպերիալիստական ուժերի կողմից նոր համաշխարհային պատերազմ սանձազերծելը»⁷:

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո շվեդական խորհրդարանում նույն միասնական կարծիքն էր ձևավորվել արտաքին քաղաքական կուրսի վերաբերյալ: Երկիրը ցանկություն էր հայտնել հավատարիմ մնալ մեծ տերությունների կողմից ստեղծված խմբավորումներին չմիանալու իր ավանդական դիրքորոշմանը:

Շվեդական չեզոքության քաղաքականության հակառակորդները հաճախ այն սահմանում էին ոչ թե որպես «չեզոքության քաղաքականություն», այլ որպես «ազատություն դաշինքներից»: Այս մասին հետաքրքիր կարծիք է հայտնում խորհրդային իրավաբան Ջադորոժնին. «Նրանք, - ասում է նա, - առաջարկում են փոխարինել «չեզոքություն» հասկացությունը «ազատություն դաշինքներից» կարգախոսով, որը, իրենց խոստովանությամբ, նշանակում է պատերազմը որպես քաղաքականության միջոց ընտ-

⁵ Տե՛ս «Дипломатический словарь». Т. I, М., 1985, էջ 268:

⁶ Տե՛ս Шнитке Г. Интриги против нейтралитета Австрии // "Новое время", 1956, № 8, էջ 10:

⁷ Задорожный Г. Еще о нейтралитете // "Новое время", 1957, № 29, с. 18.

րելու հնարավորություն, դրա համար անհրաժեշտ և առավել ձեռնառու իրադրությունում: Այլ կերպ ասած՝ խոսքը պատերազմի մեջ մտնելու չեզոք պետության հնարավորության մասին է, որը, հակառակ իր չեզոքության, կարող է միանալ պատերազմողների այն խմբին, որի հաղթանակն իրեն հավանական է թվում»⁸:

Իրոք, ինչպես արդեն նշել ենք, որևէ պետության կողմից պատերազմի ժամանակ չեզոքության քաղաքականություն վարել նշանակում է, որ վերջինս ձգտում է զերծ մնալ այդ պատերազմին ներքաշվելուց: Տվյալ դեպքում «չեզոք պետություն» ասելով հասկանում ենք պատերազմին չմասնակցող պետություն: Այս պարագայում բառը գործածվում է իր սկզբնական իմաստով, որով այն մուտք էր գործել միջազգային քաղաքականության ոլորտ: Պարզ է, որ անգամ տվյալ կողմնորոշումը կարող է ժամանակավոր լինել: Հիշենք, օրինակ, երկու համաշխարհային պատերազմների ժամանակ Իտալիայի դրսևորած չեզոքությունը, որը կրում էր հենց այդպիսի ժամանակավոր բնույթ, և չեզոքության նկատմամբ այդօրինակ անսկզբունքային վերաբերմունքն ընդունում էր անգամ պետական ղեկավարությունը, որն իր դիրքորոշումը բնութագրում էր որպես «չմասնակցություն պատերազմին»: Սկզբում կեղծավորաբար հանդես գալով հաշտարարի դերում և այնուհետև հարմար առիթն օգտագործելով՝ Իտալիան ներքաշվում էր պատերազմի մեջ⁹:

Մինչդեռ «ազատություն դաշինքներից» արտահայտությունը հիմնականում օգտագործում են բնութագրելու պետության այնպիսի քաղաքականությունը, որի դեպքում տվյալ պետությունը, որևէ դաշինքի անդամ դառնալով, խուսափում է պատասխանատու լինել դրանից բխող պարտավորությունների համար: Փաստորեն խոսքը «հավաքական անվտանգության» մասին է, ըստ որի՝ «ռազմական հարձակումը մեկ կամ մի քանի անդամների վրա համարվում է հարձակում բոլոր պայմանավորված կողմերի վրա»¹⁰: Սակայն «ազատություն դաշինքներից» հասկացությունը նույնպես կարող է սխալ մեկնաբանությունների պատճառ հանդիսանալ, քանզի այն չի արտահայտում պատերազմական գործողությունների դեպքում չեզոքություն պահպանելու պետության մտադրությունը:

«Չեզոքության քաղաքականություն» եզրույթի երկիմաստությունը վերանում է այն դեպքում, երբ այն գործածվում է *խաղաղ ժամանակ* պետության դիրքորոշումը բնութագրելու համատեքստում: Այս պարագայում պարզ է դառնում, որ պատերազմի դեպքում տվյալ պետությունը մտադիր չէ մասնակցելու ռազմական գործողություններին, եթե անձամբ չենթարկվի հարձակման¹¹:

Ձարգացնելով չեզոքության քաղաքականության անկենսունակության և անորոշության մասին մտքերը՝ արևմտյան միջազգային իրավունքի մասնագետներից շատերը կարծում էին, որ չեզոքությունն ամբողջությամբ հակասում է ՄԱԿ-ի Կանոնադրությանը: Մինչդեռ խորհրդային իրավագետների

⁸ Նույն տեղում, էջ 17:

⁹ Տե՛ս «История дипломатии». Т. IV. М., 1975, էջ 48-54:

¹⁰ "Международное право". М., 1995, с. 330.

¹¹ Տե՛ս **Унден Э.** Нейтралитет и свобода от союзов // "Новое время", 1957, № 28:

կարծիքով, տվյալ փաստարկը չէր դիմանում որևէ քննադատության: Վերջիններս նշում էին, որ Կանոնադրությանն իրականում հակասում են ռազմական դաշինքների և խմբավորումների ձևավորումը, պետությունների միջև բարեկամական հարաբերությունների հաստատման դեմ ուղղված գործողությունները, միջազգային խնդիրների և տարածայնությունների լուծման ժամանակ ուժի գործադրման կամ նրա սպառնալիքի կիրառումը:

Այդ իսկ պատճառով, խորհրդային իրավագետներն իրենց տեսանկյունը պաշտպանելու համար առաջ էին քաշում մասնավոր փաստարկներ, որոնք առավելապես քաղաքական, քան իրավական բնույթի էին: Նրանք մասնավորապես նշում էին, որ ՄԱԿ-ի գոյության առաջին տարիները ցույց են տվել, որ անդամ պետությունների միջև գոյություն ունեցող տարածայնությունների պատճառով կազմակերպությանը ոչ միշտ է հաջողվել որոշել, թե միջազգային որևէ հակամարտության դեպքում որ կողմն է եղել ագրեսորը, և որը՝ ագրեսիայի զոհը: Ըստ այդմ՝ նրանք եզրակացնում էին, որ ցանկացած պետություն իրավունք ունի և անգամ պարտավոր է ինքնուրույն որոշելու իր վերաբերմունքը ծագած հակամարտության նկատմամբ՝ դրանով իսկ հնարավորություն ստանալով մնալ չեզոքության դիրքերում: Ավելին, նրանք գտնում էին, որ ՄԱԿ-ի անդամ պետությունների մի մասը չունի սեփական զինված ուժեր և հետևաբար չէր կարող մասնակցել Անվտանգության խորհրդի կողմից լիազորված ռազմական բնույթի միջոցառումներին: Վերջապես, խորհրդային իրավագետները կարծում էին, որ առանց վերապահումների Ավստրիայի անդամակցությունը ՄԱԿ-ին վառ ապացույցն է այն իրողության, որ Անվտանգության խորհուրդն ու Գլխավոր վեհաժողովն ընդունում են, որ ոչ միայն ժամանակավոր, այսինքն՝ բացառապես պատերազմի ժամանակ, այլև *մշտական չեզոքությունը* չի հակասում ՄԱԿ-ի Կանոնադրությանը:

Մենք կարծում ենք, որ իրավաբանական տեսանկյունից արևմտյան մասնագետների հայեցակարգը ճշմարիտ է, քանի որ Կանոնադրության VII բաժնում ուժի գործադրման միջոցառումների մասին տեղ գտած դրույթները իրականում հակասում են չեզոքության քաղաքականության ոգուն, քանզի այնպիսի տարրեր են պարունակում, որոնք ուղղակիորեն համատեղելի չեն չեզոքության գաղափարին:

Հարկ է նշել, որ Անվտանգության խորհրդի լիազորությամբ ՄԱԿ-ի ցանկացած անդամ կարող է ռազմական գործողություններ սկսել ագրեսոր մեկ այլ պետության նկատմամբ: Այս իրավունքից օգտվում են նաև ՄԱԿ-ի անդամ բոլոր չեզոք երկրները, ինչը նշանակում է, որ պետությունն օգտվում է իր ինքնապաշտպանության իրավունքից իր վրա հարձակվելու դեպքում: Տվյալ դեպքում այս դրույթը որևէ կերպ չի հակասում չեզոքության կարգավիճակին և կարող է համարվել պետության սուվերենության և տարածքային ամբողջականության պահպանմանն ուղղված միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքի իրագործում: Սակայն, ըստ Կանոնադրության հոդված 2-ի 5-րդ կետի, «անդամ բոլոր երկրները պարտավոր են Միավորված ազգերին ցուցաբերել *ցանկացած օգնություն* (այսինքն՝ ոչ միայն սեփական ինքնապաշտպանության կազմակերպում - Մ. Ա.) իր ձեռ-

նարկած միջոցառումներում...»¹², իսկ հոդված 25-ում նշվում է, որ «Միավորված ազգերի անդամները համաձայնում են ընդունել և իրագործել Անվտանգության խորհրդի որոշումները՝ համաձայն ներկա Կանոնադրության»¹³:

Բացի այդ, պետք չէ մոռանալ, որ չեզոքության քաղաքականության դասական կանոնները միջազգային հանրությունը որդեգրել է նախքան Ազգերի լիգայի և ՄԱԿ-ի ստեղծումը, հետևաբար անհիմաստ է պնդել դրանց բացարձակ համատեղելիության մասին:

Չեզոքության հակառակորդների հաջորդ փաստարկն այն էր, որ չեզոք կարգավիճակը վնաս է հասցնում պետության ինքնուրույնությանը և միջազգային ասպարեզում սահմանափակում է նրա հնարավորությունները: Սա, բնականաբար, սխալ եզրահանգում էր: Չեզոք երկրները, բացի իրենց ազգային անվտանգությունն ապահովելուց, միջազգային կարևոր դեր ունեն. նրանց միջնորդական գործունեությունն ուղղված է աշխարհի տարբեր վայրերում հակամարտությունների խաղաղ լուծմանը: Նրանց միջազգային բարձր դերի մասին են վկայում նաև իրենց տարածքներում համաշխարհային նշանակության կազմակերպությունների տեղակայումն ու միջազգային կոնֆերանսների անցկացումը:

Չեզոքության շրջանում բուռն քննարկումների առարկա էր դարձել նաև չեզոքության քաղաքականության և հավաքական անվտանգության ամրապնդման փոխհարաբերության հարցը: Արևմտյան քաղաքական գործիչներից շատերը կարծում էին, որ խորհրդային Միության կողմից չեզոք պետություններին օգնություն ցուցաբերելը և նրանց վարած արտաքին քաղաքականությանը դրական գնահատական տալը վնասում են հավաքական անվտանգության քաղաքականության իրականացմանը:

Սակայն պետք է նշել, որ Առաջին և Երկրորդ համաշխարհային պատերազմների ընթացքում և անգամ հետպատերազմյան շրջանում հավաքական անվտանգության ամենամեծ ջատագովներից մեկը հենց խորհրդային Միությունն էր. նա էր կազմել Եվրոպայում հավաքական անվտանգության պայմանագրի և Ասիայի ու Խաղաղօվկիանոսյան երկրների հավաքական խաղաղության պակտի նախագիծը: Իսկ խորհրդային քաղաքական գործիչները նշում էին, որ իրականում չեզոքության քաղաքականության և հավաքական անվտանգության հասնելու ձգտման միջև ոչ մի հակասություն չկա: Միջազգայնագետ Կորոլինն այդ մասին գրում է. «Իհարկե, եթե կնքվեր հավաքական անվտանգության մասին համաեվրոպական պայմանագիր, որին, այլոց շարքում, կմիանային, օրինակ, սկանդինավյան երկրները, խաղաղության բոլոր ազնիվ կողմնակիցները միայն բավարարվածություն կարտահայտեին: Բայց քանի դեռ այդպիսի պայմանագիր գոյություն չունի, իսկ սկանդինավյան երկրներից ոմանք իրենց ստորագրություններն են դրել Յուլիսատլանտյան պակտի տակ, այդ պետությունների անցումն «ատլանտյան» դիրքերից դեպի չեզոքության հարթություն Եվրոպայում խաղաղության և անվտանգության ամրապնդմանն ուղղված քայլ կլիներ:

¹² **Chesterman S., Frank T., Malone D.** Law and practice of the United Nations, NY, 2008, p. 599.

¹³ Նույն տեղում, էջ 603:

Նույն կերպ պետք է գնահատել նաև Ասիայի և Աֆրիկայի որոշ երկրների՝ դրական չեզոքության քաղաքականությունը: Մյուս կողմից, քանի որ չեզոքության քաղաքականության համեմատ ագրեսիայի խոչընդոտ հանդիսացող հավաքական անվտանգության համակարգը խաղաղության հասնելու պայքարի ավելի բարձր մակարդակ է, ապա նրանից նահանջելը և անցումը չեզոքության դիրքերին քայլ է դեպի հետ, այլ ոչ թե զարգացում միջազգային հարաբերություններում»¹⁴:

Քաղաքական բանավեճն էլ ավելի է թեժանում այն ժամանակ, երբ Եվրոպական տնտեսական համայնքը (ԵՏՀ) անդամակցության է հրավիրում չեզոք երկրներ Ավստրիային, Շվեյցարիային և Շվեդիային: Խորհրդային քաղաքագետների ու իրավագետների կարծիքն այն էր, որ չեզոք հռչակված երկրների մուտքը ԵՏՀ (ներկայիս Եվրոպական միություն) կխափանի միջազգայնորեն ճանաչված նրանց կարգավիճակը և որդեգրած քաղաքականությունից նահանջ կնշանակի: Սա բացատրվում է նրանով, որ հետպատերազմյան շրջանում Եվրոպական տնտեսական համայնքը և Յուլիսաստլանդյան դաշինքը դիտվում էին որպես մեկ միասնական համակարգ:

Բացի այդ, նշվում էր, որ, Յուլիս համաձայնագրի համաձայն, որով ստեղծվել էր ԵՏՀ-ն, նախատեսված էր ձևավորել «Միացյալ Նահանգների հետ քաղաքականապես և տնտեսապես փոխկապված եվրոպական համադաշնություն»¹⁵: Փաստորեն վտանգվում էր վերոնշյալ պետությունների ոչ միայն քաղաքական, այլև տնտեսական անկախության հարցը: Թեպետ Ավստրիայի, Շվեյցարիայի և Շվեդիայի հատկապես կոմունիստ պատգամավորները դեմ էին արտահայտվում «ընդհանուր շուկային» անդամակցությանը, այնուամենայնիվ 1962 թ. նոյեմբերին Վիեննայում կայացած կոնֆերանսում այս երկրների արտգործնախարարները որոշում են ընդունում ԵՏՀ-ի հետ *սսոցիալիստիկ* մասին: Նման հեղեղուկ ձևակերպումն արդեն վկայություն էր այն բանի, որ այս երկրները մտադրություն ունեն հետագայում անդամակցելու կառույցին:

Մյուս կողմից, նրանք այս քայլով փորձում էին հանգստացնել չեզոքության կողմնակիցներին՝ նշելով, որ սոցիալիստիկ ոչ մի կերպ չի հակասում չեզոքության կարգավիճակին: Հնչում էին նաև կարծիքներ, որ ռազմական չեզոքությունը խոչընդոտ չէ այլ երկրների հետ տնտեսական համագործակցության վերաբերյալ բանակցություններ վարելու համար, իսկ «ընդհանուր շուկային» հետ ոչ մի հարաբերություն չունենալը կարող է հանգեցնել երկրների տնտեսական մեկուսացմանը:

Խորհրդային Միությունը, ամեն կերպ փորձելով պահպանել սեփական դիվանագիտության հաղթանակի արդյունք հանդիսացող Ավստրիական չեզոքությունը, հայտարարում էր, որ «ընդհանուր շուկային» միանալու խնդիրը առավել խստորեն է պարտադրված Ավստրիային, քանզի եթե Շվեյցարիան և Շվեդիան չեզոք պետություն դառնալու որոշումը կայացրել էին սեփական նախաձեռնությամբ, ապա Ավստրիան պարտավորվել է չե-

¹⁴ Коровин Е., *նշվ. աշխ.*, էջ 53:

¹⁵ Афанасьева О. Политика нейтралитета под угрозой // "Международная жизнь", 1962, № 12, с. 110.

գոքություն պահպանել համաձայն միջազգային պայմանագրի, որն էլ երաշխավորվել էր չորս գերտերությունների կողմից¹⁶:

Ավելին, Խորհրդային Միությունը հասկանում էր, որ ԱՄՆ-ը, չհանդիսանալով ԵՏՀ-ի անդամ, այնուամենայնիվ կարողանում էր կառույցին իր քաղաքական կամքը թելադրել: Նահանգները քանիցս նշել էր, որ ցանկանում էր Եվրոպան տնտեսապես միավորված տեսնել և դեմ էր վերջինիս տարածքում տնտեսական մրցակից խմբավորումների առկայությանը: Այդ ժամանակ Խորհրդային Միությունում գերիշխող էր այն կարծիքը, որ հենց ԱՄՆ-ն էր հետաքրքրված միացյալ Եվրոպական համադաշնության ստեղծմամբ, որի օգնությամբ նրան կհաջողվեր պայքար մղել սոցիալիստական երկրների ճամբարի դեմ:

Միայն «սառը պատերազմի» ավարտից հետո՝ 1995 թ., Ավստրիան և Շվեդիան դարձան Եվրոպական միության անդամ, ինչը, սակայն, չազդեց նրանց չեզոք կարգավիճակի վրա: Իսկ չեզոք պետություններից ամենադասականը համարվող Շվեյցարիան մերժեց այս կազմակերպության անդամակցության հրավերը¹⁷, սակայն 2002 թ. նա դարձավ ՄԱԿ-ի լիիրավ անդամ:

Ցանկանալով զերծ մնալ երկու հակադիր ճամբարների միջև տեղի ունեցող անախորժություններից՝ Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի մի շարք պետություններ, որոնք անկախություն էին ձեռք բերել գաղութատիրական ռեժիմի դեմ երկարատև ազատագրական պայքարից հետո, այդ լուծը թոթափելուն պես բռնում էին չեզոք քաղաքականություն վարելու ուղին: Նրանք հասկանում էին, որ ռազմական դաշինքների մեջ ներքաշվելը կարող էր կրկին հանգեցնել գաղութատիրական կախվածության:

Հակադիր բևեռների քաղաքականությունից անկախ գործելու առաջին քայլերը կատարեցին Հնդկաստանի վարչապետ Ջավահարլալ Ներուն, Եգիպտոսի նախագահ Գամալ Աբդել Նասերը և Հարավսլավիայի առաջնորդ Տիտոն: Սկիզբ է դրվում «չմիացման շարժմանը» (*non-aligned movement, движение неприсоединения*), որը գրականության մեջ հանդիպում է նաև «չեզոքականություն», «դաշինքներին չմասնակցություն», «ակտիվ չեզոքություն», «դրական չեզոքություն» և այլ անվանումներով:

Այս երկրների կողմից չեզոք քաղաքականություն վարելու հայտարարությունները նշանակում էին, որ նրանք պատրաստակամ են վարելու հստակ քաղաքական կուրս: Փաստորեն, կարելի է ասել, որ նրանք ընտրեցին չեզոք պետության կարգավիճակը նաև խաղաղության ժամանակ: Սակայն, ինչպես արդեն նշվել է, սա այն չեզոքությունը չէ, որը կարգավորվում էր միջազգային իրավունքով և գոյություն ուներ մինչ Երկրորդ համաշխարհային պատերազմը: Չեզոքության հին հասկացությունը լրացվեց նոր բովանդակությամբ, որը արտացոլում էր ժամանակաշրջանի պահանջները: Սակայն այս «նոր չեզոքությունը» յուրաքանչյուր պետության կողմից մեկնաբանվում էր յուրովի՝ համաձայն սեփական ընկալման: Պետության միակողմանի հայտարարությունները չեզոքության քաղաքականություն վարելու մասին միջազգային իրավունքի տեսանկյունից չեն կա-

¹⁶ Տե՛ս **Афанасьева О.**, նշվ. աշխ., էջ 110:

¹⁷ Տե՛ս «Европейский союз». М., 2003, էջ 16:

րող հիմք հանդիսանալ, որ այն ճանաչվի չեզոք և իրավական պարտավորություններ առաջացնի այլ երկրների համար՝ չնայած այն բանին, որ, անկախ ամեն ինչից, պետությունները պետք է պատրաստական լինեն հարգելու ինքնիշխան ցանկացած պետության քաղաքական կամքը:

Ստեղծված իրադրությունը պահանջում էր, որ մշակվեին համապատասխան կանոններ, որոնց միջոցով հնարավոր կլիներ կարգավորել չեզոք քաղաքականությանը կողմնակից երկրների և այլ պետությունների միջև փոխհարաբերությունները, քանի որ հատկապես արևմտյան երկրներից շատերը բացասաբար էին վերաբերվում չեզոքության քաղաքականությանը և ստիպված էին ընդունել դրա իրավականությունն ու գոյության հնարավորությունը՝ նկատի առնելով սոցիալիզմի և կապիտալիզմի ուժերի նոր հարաբերակցությունը:

Այդ իսկ պատճառով ակտիվանում է չեզոքության վերաբերյալ միջազգային իրավական նորմերի մշակման գործընթացը, որում ակտիվ գործունեություն է ծավալում ժողովրդավար իրավաբանների միջազգային ասոցիացիան (ԺԻՄԱ): 1960 թ. ԺԻՄԱ-ի VII համագումարում որոշում է ընդունվում «չեզոքություն» հասկացության նոր մեկնաբանության անհրաժեշտության մասին, որը պետք է համապատասխաներ ժամանակի պահանջներին: Համագումարի որոշման մեջ նշվում էր, որ չեզոք պետության իրավունքների ու պարտականությունների մեջ պետք է ընդգրկվեն չմասնակցությունը ռազմական խմբավորումներին, նրա տարածքում արտասահմանյան ռազմական բազաների ստեղծման և տեղակայման արգելումը, նրա օդային տարածքի օգտագործման արգելումը լրտեսության, միջուկային պատերազմի կամ այլ թշնամական նպատակներով, միջուկային զենք ունենալու արգելումը, ուղղակի կամ անուղղակի ագրեսիա իրականացնելու նպատակով չեզոք պետության տարածքի օգտագործման արգելումը, երկրի դուրսբերումը չեզոքության հետ անհամատեղելի պարտավորություններ առաջացնող պայմանագրերից և դաշինքներից, այլ պետությունների օգնությանը դիմելու չեզոք երկրի իրավունքի ճանաչումը վերջինիս կարգավիճակի, քաղաքական և տնտեսական ինքնիշխանության խախտման, ինքնապաշտպանության կամ իր նկատմամբ ագրեսիայի դեպքում և այլն¹⁸:

Չեզոքության քաղաքականության նոր բովանդակության սահմանման գործում մեծ դեր խաղաց 1961 թ. Բելգրադում կայացած «չմիացման շարժմանը» հարող երկրների կոնֆերանսը, որը մշակեց այն հիմնական սկզբունքներն ու նպատակները, որոնցով նրանք պետք է առաջնորդվեին: «Պատերազմի վտանգի և խաղաղության կոչի մասին» հայտարարությունում, ինչպես նաև «Դաշինքներից դուրս պետությունների ղեկավարների կամ կառավարությունների հռչակագրում» ամրագրվեցին խաղաղ ժամանակ մասնակից երկրների հիմնական խնդիրները. 1) ակտիվ պայքարը հանուն խաղաղության. կոնֆերանսի մասնակիցները հայտարարեցին, որ ոչ մի ժողովուրդ և ոչ մի կառավարություն չի կարող հետ կանգնել համընդհանուր խաղաղություն հաստատելու պատասխանատվությունից: 2) Մասնա-

¹⁸ Стів Горшенин К. Крупный вклад в дело мира: к итогам VII Конгресса Международной ассоциации юристов-демократов // "Советское государство и право", 1961, № 2:

կից պետությունները պատրաստակամություն են հայտնում համագործակցելու բոլոր պետությունների հետ՝ անկախ նրանց հասարակական և քաղաքական կառուցվածքից: Նրանք սատար են կանգնում խաղաղ գոյակցության սկզբունքներին՝ դժգոհություն հայտնելով ու քննադատելով «սառը պատերազմի» բոլոր դրսևորումները: 3) «Չեզոքները» հանդես են գալիս գաղութատիրության ամբողջական, շուտափույթ և վերջնական վերացմանն ուղղված միջոցառումներին աջակցելու կոչերով. անհրաժեշտ համարվեց օտարերկրյա զորքերի դուրսբերումը գաղութների տարածքից, տարբեր ազգերի ինքնորոշման իրավունքի ճանաչմանն ուղղված պայքարին աջակցություն ցուցաբերելը, ինչպես նաև «նեոգաղութատիրության վերացման և իմպերիալիստական տիրապետության» դեմ ուղղված միջոցառումներին մասնակցելը: 4) Շարժման մասնակիցները պարտավորվում են օգնություն ցուցաբերել իրենց տարածքներում օտարերկրյա բազաների տեղակայման դեմ պայքարող պետություններին: 5) «Չմիացման շարժմանը» հարող պետությունները պարտավորվում են մասնակցել տնտեսական անհավասարության դեմ ուղղված միջոցառումներին, ինչը նշանակում էր պայքար առևտրի հավասար ու ազնիվ պայմանների ստեղծման համար և օտարերկրյա տնտեսական ու տեխնիկական օգնություն ստանալու իրավունք՝ անկախ քաղաքական կամ այլ հանգամանքներից¹⁹:

Այսպիսով, չեզոքության ուղին ընտրած երկրները ցանկություն էին հայտնում երկու հակադիր բևեռների միջև հակամարտություններին չմասնակցելու միջոցով վարել անկախ արտաքին քաղաքականություն, պայքարել միջազգային անվտանգության ամրապնդման և ժողովուրդների խաղաղ գոյակցության համար:

Ռուս պատմաբան և դիվանագետ Պոպովը, մեջ բերելով Յնդկաստանի առաջին վարչապետի խոսքերը, բարձր է գնահատում «չմիացման շարժման» դերը նաև համաշխարհային դիվանագիտության զարգացման գործում՝ նշելով, որ «այն (շարժումը - Մ. Ա.) մեծ նշանակություն էր տալիս միջպետական անձնական շփումներին: Ներում ասում էր, որ այդպիսի շփումները ստեղծում են ոչ պաշտոնական մթնոլորտ, ինչի պարագայում ավելի հեշտ է հասկանալ միմյանց տեսակետները, համաձայնության գալ կամ հանգիստ պարզել տարակարծությունները»²⁰:

Փաստորեն, Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո չեզոքության քաղաքականությունը հայտնվում է երկու հակադիր բևեռների հակամարտության կենտրոնում՝ դառնալով «սառը պատերազմի» գործոններից մեկը: Թե՛ ԽՍՀՄ-ը, թե՛ ԱՄՆ-ն առանձնապես հետաքրքրված էին չեզոք պետությունների ճակատագրով և նրանց հետ հարաբերություններում հետապնդում էին միմյանց նկատմամբ գերակայության հասնելու սեփական շահերն ու նպատակները. եթե ԱՄՆ-ը բացահայտորեն հանդես էր գալիս «միասնական Եվրոպա» ստեղծելու կոչերով և դեմ էր արտահայտվում չեզոքությանը, ապա Խորհրդային Միությունն այս հարցում դրսևորում էր դիվանագիտական ճկունություն՝ ներկայանալով որպես չեզոք երկրների անվտանգության և որդեգրած քաղաքականության

¹⁹ Стів Хлестов О., նշվ. աշխ., էջ 95:

²⁰ Попов В. Современная дипломатия: теория и практика. М., 2003, с. 82.

երաշխավոր: Այնուամենայնիվ, ստեղծված աշխարհաքաղաքական հավասարակշռության պայմաններում չեզոքության քաղաքականությունն էլ ավելի է ամրապնդում իր դիրքերը համաշխարհային քաղաքականության ասպարեզում՝ դառնալով խաղաղասիրական շարժման հենքն ու գաղափարախոսությունը:

МИКАЭЛ АВЕТИСЯН – *Борьба вокруг политики нейтралитета в годы "холодной войны"*. – В послевоенное время политика нейтралитета оказалась в центре конфликта двух противостоящих сторон, став одним из инструментов холодной войны. Ни СССР, ни США не были особенно заинтересованы в судьбе нейтральных стран. Строя с ними отношения, великие державы преследовали собственные цели и стремились к господству в международных делах. Если Соединенные Штаты открыто выступали за объединение Европы и выражали недовольство политикой нейтралитета, то Советский Союз проявлял большую дипломатическую гибкость, выставляя себя гарантом безопасности нейтральных стран. Так или иначе, в условиях существовавшего тогда геополитического баланса политика нейтралитета завоевала прочные позиции на мировой арене.

MIKAYEL AVETISYAN – *Struggle over Neutrality Policy in Years of the "Cold War"*. – After World War II policy of neutrality found itself in the center of the conflict of two opposite poles, becoming one of the tools of the Cold War. Neither the USSR nor the United States of America were particularly interested in the fate of the neutral countries and building relationships with them, they pursued their own interests and goals for domination in the world politics. If the United States was openly calling for the unification of Europe, and expressed its dissatisfaction about the policy of neutrality, the Soviet Union in this matter showed diplomatic flexibility, seeming to guarantee the security of neutral countries and their policies. However, under the existing geopolitical balance, the policy of neutrality further strengthened its position in the international arena, becoming the mainstay and the ideology of the movement for peace.